# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *ՈՐՈՇՈՒՄ*

*27 սեպտեմբերի 2018թվականի N 859*

### *ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 15-ի որոշմամբ հաստատված հավելվածը և քաղաքի թվով 12 /տասներկու/ անապահով բնակիչների դիմումները՝*

### *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1.Հրազդան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 15-ի «Հրազդան համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 136-Ն որոշմամբ հաստատված բյուջեի հավելվածում «Այլ նպաստներ բյուջեից» /4729/ հոդվածով նախատեսված ծախսերից 185000 /մեկ հարյուր ութսունհինգ հազար/ դրամ հատկացնել Հրազդան քաղաքի թվով 12 /տասներկու/ անապահով բնակիչների:*

*2.Հանձնարարել ֆինանսական բաժնին կատարելու նշված վճարումը:*

*3.Սույնորոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ* *Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *ՈՐՈՇՈՒՄ*

*27 սեպտեմբերի 2018թվականի N 860*

*ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 554 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն « Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի*

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1.Հրազդանի քաղաքապետի 2006 թվականի դեկտեմբերի 15-ի <<Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի Հ/Մ հանրակացարանի թիվ 121 բնակարանը սեփականաշնորհելու թույլտվություն տալու մասին>> թիվ 554 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.*

*Որոշման 2-րդ կետի - «Մարտիրոսյան Ալեքսանդր Սերգեյի» բառերը հանել:*

*2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ* *Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*27 սեպտեմբերի 2018թվականի N 861*

*ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, 26-րդ կետի, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի $169.^{16}$-րդ հոդվածի 6-րդ մասի, 219.1, 275-283-րդ, 305 հոդվածների, ուսումնասիրելով Հրազդան համայնքի ղեկավարին առընթեր վարչական հանձնաժողովի կողմից ներկայացված նյութերը, 2018 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 8-րդ արձանագրությունը և հաստատված համարելով անհատ ձեռնարկատեր Հենրիկ Գալստյանի կողմից նույնատիպ խախտումը մեկ տարվա ընթացքում կրկին կատարելու՝ առանց թույլտվության առևտրի և հանրային սննդի օբյեկտները, զվարճանքի օբյեկտը ժամը 24:00- ից հետո աշխատացնելու հանգամանքը:*

## *<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝</u>*

*1.Անհատ ձեռնարկատեր Հենրիկ Մխիթարի Գալստյանին /ք. Հրազդան Միկրոշրջան թաղամաս 202 շենք 8 բնակարան/ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի $169.^{16}$-րդ հոդվածի 2-րդ մասով ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակելով տուգանք 400 000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:*
*2.Որոշման պատճեն երեք օրվա ընթացքում հանձնել Հենրիկ Գալստյանին:*
*3.Տուգանքը պետք է վճարվի սույն որոշումը իրավախախտում կատարած անձի կողմից ստանալուց ոչ ուշ քան տասնհինգ օրվա ընթացքում՝ 900125001488 հաշվարկային հաշվին:*
*4.Վճարումը սահմանված ժամկետում չիրականացնելու և որոշումն անբողոքարկելի դառնալու դեպքում գումարը կգանձվի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով:*
*5.Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:*
*6.Սույն որոշումն անբողոքարկելի է դառնում այն ստանալու պահից 2 ամիս հետո:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝*** ***Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

---

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*28 սեպտեմբերի 2018թվականի N 862*

## *ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ, 8-րդ բաժինների պահանջների, հիմք ընդունելով Վանիկ Հակոբյանի 2018 թվականի սեպտեմբերի 25-ի դիմումը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 130-րդ շենքի թիվ 24 բնակարանի բնակիչ Վանիկ Հրանտի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական՝ N 06062012-07-0177, տրված՝ 2012 թվականի հունիսի 6-ին) Հրազդան քաղաքի Մ.Բաղրամյան թաղամասի 130-րդ շենքին հարող տարածք թիվ 13 հողամասի հասցեն փոփոխել՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Մ.Բաղրամյան թաղամաս 130/13 հասցեով:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝* *Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---


2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*28 սեպտեմբերի 2018թվականի N 863*

### *ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով դիմումատուի հայտը և Հրազդան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 15-ի N115-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.Անհատ ձեռնարկատեր Ժենյա Եղիազարյանին տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը/ գրանցման հասցե՝քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, շենք 105, 1-ին հարկ/ առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն, մինչև 26 քառակուսի մետր մակերես//:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** **Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*01 հոկտեմբերի 2018թվականի N 864*

*ԽԱՆՈՒԹԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Սերյոժա Հարությունյանի 2018 թվականի սեպտեմբերի 26-ի դիմումը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 229 շենքի թիվ 27 բնակարանի բնակիչ Սերյոժա Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ 2180259, տրված՝ 2006 թվականի ապրիլի 25-ին) Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 105 շենքի 1-ին հարկում գտնվող խանութին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Մ.Բաղրամյան թաղամաս 105/13:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ*** ***Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*01 հոկտեմբերի 2018թվականի N 865*

## *ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Հենրիկ Խաչատրյանի 2018 թվականի սեպտեմբերի 26-ի դիմումը.*

*<u>Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝</u>*

*1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի 322 տան բնակիչ Հենրիկ Խաչատրյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ 2186333, տրված՝ 2006 թվականի հունիսի 30-ին) Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Ջրառատ թաղամաս 307/2:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝* *Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*02 հոկտեմբերի 2018թվականի N 866*

## *ՌԵՍՏՈՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով «ՈՐԴԻ ՄԵԽԱԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Գեղամ Ղազարյանի 2018 թվականի հոկտեմբերի 02-ի դիմումը.*

## *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1.«Որդի Մեխակ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ 2149392, տրված՝ 2006 թվականի մարտի 30-ին) Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասում գտնվող ռեստորանային համալիրին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս, Ջրավար Անդրանիկի պողոտա 56:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ* *Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*02 հոկտեմբերի 2018թվականի N 867*

*ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Արմենուհի Սեդրակյանի 2018 թվականի սեպտեմբերի 28-ի դիմումը.*

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝*

*1.Ալեքսան Ալեքսանյանին (ներկայումս հանգուցյալ, մահվան վկայական՝ հատոր 00058 , էջ 377, տրված՝ 11.07.2013թ) պատկանող (Ժողովրդական պատգամավորների Հրազդանի քաղխորհրդի գործկոմի 1990 թվականի հունիսի 28-ի արձանագրություն թիվ 7) Հրազդան քաղաքի Կաքավաձոր թաղամասում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Կաքավաձոր թաղամաս, 1-ին փողոց 19:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝* *Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *ՈՐՈՇՈՒՄ*

*02 հոկտեմբերի 2018թվականի N 868*

*ԿԱՌՈՒՅՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ բաժնի, հիմք ընդունելով «ՈՐԴԻ ՄԵԽԱԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Գեղամ Ղազարյանի 2018 թվականի հոկտեմբերի 02-ի դիմումը.*

*<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ</u>՝*

*1.«Որդի Մեխակ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը թույլատրել Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի Զորավար Անդրանիկի պողոտա 56 հասցեում գտնվող ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ 2149392, տրված՝ 2006 թվականի մարտի 30-ին) հողամասում կառուցել հանդիսությունների սրահ՝ քանդելով սեփականության իրավունքի վկայականում թիվ 1,2 և 6 համարների տակ նշված ռեստորանը, տնակը և պահակատունը:*
*2.Կառուցման վերաբերյալ նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանքի) հիման վրա մշակել և ներկայացնել համաձայնեցման աշխատանքային նախագիծ:*
*3.Շինարարական աշխատանքները սկսելուց 3(երեք) օր առաջ ներկայացնել N2-5 ձևի տեղեկանք:*
*4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ* *Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ*